ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Սիրելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն այունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը կամ տառակապակցությունը:**

1) համա-րոպական, արժ-որել, գին-աճառ, ալ-արս
2) խարխա-ել, հղ-անալ, թրմ-ոց, հա-շտապ
3) սաղավար-, խր-վիլակ, գաղ-նի, խայ-աբղետ
4) նա-կին, տա-տակ, տա-տուկ, ապու-տ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:**

1) ու-ափառ, տանջա-ուկ, հո-ուհի, ա-ահայր
2) մ-կահողմ, անդո-ագիր, չո-որդ, խորազ-ին
3) գործու-ում, այ-ենական, ա-կուն, հե-են
4) օ-ան, տա-երք, ըն-իմադիր, տա-ալուծել

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ, ՄԱՐԻԱՆՅԱՆ ԻՋՎԱԾՔ
2) ՄԵԾ ՀԱՅՔ, ԼՅՈՒԴՎԻԿՈՍ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ, ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵԹՀՈՎԵՆ, ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
3) ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
4) ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ, ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ, ՆՈՐ ՋՈՒՂԱ, ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում ձայնավորի հնչյունափոխություն կա:**

1) պատրանք, գնացուցակ, վիրակապ, վերստին
2) ուղեկալ, ակնդետ, խնկաբույր, մանկամարդ
3) հրանոթ, հոգաբարձու, աղավնյակ, գիշանգղ
4) սրախողխող, լուսարձակ, ընչազուրկ, երկնասլաց

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառաձևերի) վերջին վանկն է շեշտվում:**

1) քույրդ, քաղաքներից, դուստրեր
2) թրխկոց, կարծես թե, դրամարկղեր
3) մեծ-մեծ, ի դեպ, չեխովյան
4) վեցական, իհարկե, բարձրահոն

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է ընդգծված *ռ*-ն արտասանվում *վo:***

1) ամենառակյալ, կողոսկր, երկարառտ
2) բազմառստ, բարձրռրակ, ցածրառրմ
3) հոգեռրդի, հնառճ, արջառրս
4) բարեռողջույն, անռողոք, ենթառրովայնային

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) ճախրել, թռչել, ճողոպրել, սավառնել
2) ակնապիշ, սևեռուն, ակնբախ, անքթիթ
3) արդար, աչառու, իրավացի, անմեղ
4) պչրել, ծեքծեքել, սեթևեթել, նազել

8 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Դատավճռով նախատեսված էր ամբողջ գույքի բռնագրավում:
2) Ակնոցի տակից աչքերը հառնեց դեմ դիմաց նստածին:
3) Ուսուցչուհին դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած աշակերտներին:
4) Ակութներում հանգան վերջին կրակները, և վրանախումբը ընկղմվեց խավարի մեջ:

9 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***շատ ջուր վերցնել***-վեճերի առիթ տալ, ***մատի փաթաթան անել***-խրատները մտապահել
2) ***Ռուբիկոնն անցնել***-վճռական քայլ կատարել, ***ձեռքերը լվանալ***-հրաժարվել մի բանի մասնակցելուց
3) ***ջուր ծեծել***-ավելորդ, անօգուտ խոսել, ***կրակի հետ խաղալ***-վտանգավոր քայլ կատարել
4) ***մի թելով կարած լինել***-նույն բացասական հատկություններն ունենալ, ***քամուն տալ***-վատնել

10 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) հանդուգն-վեհերոտ, տարակարծիք-համատեղ
2) բերրի-անպտուղ, ներհակ-իրարամերժ
3) երևակայական-պատմական, իմաստակ-թերուս
4) մեծատուն-ընչազուրկ, մեղանչել-ապաշխարել

11 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

1) թավուտ, ծիրանագույն, տհաճ, ամենալավ
2) պարագիծ, քսուք, անդրավարտիք, փափուկ
3) ազդու, փառք, հատուկ, արժանի
4) թերահավատ, խելագար, վայելուչ, հրապարակ

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) բարետես, փայտածուխ, դավադիր
2) կաշեգործ, տնետուն, լուսահորդ
3) կորամեջք, դյուցազուն, այգաբաց
4) ալեծուփ, նախնադար, դափնեպսակ

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -*եր* վերջավորությամբ:**

1) վագր, դիտակետ, հերթապահ, միջնապատ
2) ստուգայց, սարալանջ, ձիաբեռ, խաղաթուղթ
3) գիտափորձ, մեծատառ, շտաբ, ճամփեզր
4) թռչնաբույն, զորացույց, հողամաս, ամսագիր

14 **Տրված հատվածներում հոդի ո՞ր տեսակը գործածված *չէ:***

- Երգերդ աղբյուր են զուլալ՝ Մեր երկրի արևից բխած:
- Կարծես շատ քիչ է աշխարհիս հողը, Որ մարդիկ մեռնում ու հող են դառնում:
- Տխուր երեկոն զարկել է վրան. Սիրտս կարոտով կանչում է քեզ, եկ:

1) ստացական
2) դիմորոշ
3) որոշիչ
4) ցուցական

15 **Ո՞ր նախադասության մեջ կապ *չկա:***

1) Նա ինձ մոտ է գիշերում. երեկոյան եթե վաղ գա, հենց այս գիշերվա գնացքով կճանապարհեմ:
2) Ես գիտեմ՝ մի օր պիտի չքանաս Որպես մի երազ՝ չծնված բնավ:
3) Մայրը ուշադիր հետևում էր, մինչև որդին անցավ սառցակալած ճանապարհը:
4) Բախտը ինձնից թռավ, գնաց Վերջալույսի շողերի մեջ:

16 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են անկախ դերբայներ:**

1) գտած, լրագրող, ցանկանալ
2) արտասանի, թռվռացող, քնեցնելիս
3) կարկամած, փախել, գրելուց
4) ամպած, դառնալով, բարձրացող

17 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

1) գաղթել, բռնել, կտրտել, խաղալ
2) ողողանջել, զրուցել, թույլատրել, տեսնել
3) հոգնել, վազվզել, մարտնչել, հարցնել
4) կարդալ, կառչել, դիպչել, տնկել

18 **Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ *չկա:***

1) Նայեցի նրա դեմքին. այդ դեմքը միաժամանակ արտահայտում էր և՛ զայրույթ, և՛ պաղատանք:
2) Բայց հոգիս չունի ոչ մի հանգրվան, Նորից թվում է ինձ ոսկե հեռուն:
3) Եվ տեսնում էի՝ զմրուխտ շորերով Մի նավ էր սահում օրոր ու շորոր:
4) Ես, որ երբեք զգացմունքային չեմ եղել, ուզեցի հրացանս առնել և հենց նրա աչքի առջև փշրել այն:

19 **Ո՞ր նախադասության մեջ *ու* հոլովման ենթարկվող գոյական *չկա:***

1) Կլինես քնքուշ, մոտիկ, հարազատ, Անուշ խոսքերով կդյութես հոգիս:
2) Ձին ճանաչում էր այդ հովտի բոլոր բույրերն ու հոտերը:
3) Ձորակներում հիմա էլ կա Մանասի տնկած այգին՝ սպիտակ ու կարմիր վարդերի թփերով:
4) Ծնողը պարտավոր է երեխայի մեջ դեռ մանկուց սեր սերմանել դեպի հայրենիքը:

20 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:**

1) բաղձալի, ամենևին, վայելուչ, մկանուտ
2) առաջնային, այսպիսի, աշխույժ, արքուն
3) արագահոս, վճռորոշ, խավարամած, հմայիչ
4) մարդախույս, մշտապես, միակ, պարզունակ

21 **Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:**

1) Ուշ գիշեր է:
2) Լույսը շուտով կբացվի:
3) Երեխանե՛ր, մի՛ վազեք:
4) Ինձ չեն հասկանում:

22 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Ձայնը ալիքվելով հասավ անձավին, …… , և նորից տիրեց լարված լռություն:

1) ինչքան էլ լեռնալանջը բուսականությունից զուրկ էր
2) իսկ վերին այրերի մոտ, ցից-ցից քարերին թառած, հեռուներին են նայում հպարտ արծիվները
3) որ ահարկու երախի պես կլանեց նրան
4) որ զրնգուն երգի պես տարածվում էր շրջակայքում

23 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Օրերի մշուշից մոտենում է ինձ չոլախ Եգորը, ելնում է, ինչպես մեր ժայռերը՝ սպիտակ մառախուղի միջից, և ես տեսնում եմ նրա ցեխոտ մեջքը և կավի նման մաշկը, որ դեղնել էր քարանձավի խոնավությունից:

1) 

2) 

3) 

4) 

24 **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

1) Բրուտանոցից ութսուն-իննսուն մետր հեռավորության վրա արևի ցոլքերով ոսկևորված ձորն էր:
2) Խթանելով տնտեսության զարգացումը՝ պետությունը փորձում է լուծել սոցիալական խնդիրներ:
3) Ծեր արծվի պես բաց արեց աչքերն ու իրեն դիմաց տեսավ դաժան մահը:
4) Նա եղավ շատ երկրներում, բայց ի վերջո վերադարձավ և մեզ համար հյուսեց իր հոգեզմայլ երգը:

25 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Որքա՜ն լավ է մարդկանց՝ քեզ լիովին վստահելը:*
   Որքա՜ն լավ է, երբ մարդիկ քեզ լիովին վստահում են:
2) *Թատրոնը չափից ավելի շատ սիրողը ի վերջո խեղդում է իր սիրելիին:*
   Նա, ով չափից ավելի շատ է սիրում թատրոնը, ի վերջո խեղդում է իր սիրելիին:
3) *Հրատապ խնդիր է երկու թունելախորշերի միանալը ճիշտ ժամկետում:*
   Հրատապ խնդիրն այն է, որ երկու թունելախորշերը միանան ճիշտ ժամկետում:
4) *Ուսուցիչը կարդաց պարգևի արժանացածների անունները:*
   Ուսուցիչը կարդաց նրանց անունները, ովքեր պարգևի են արժանացել:

26 **Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված:**

1) Ու եկողներն էլ խորհուրդ չեն տալու Փնտրել անհնարն ու անկարելին: *(գոյական)*
2) Ի՞նչ է մնում գնացողին, Ի՞նչ է մնում ինձ անելու: *(դերանուն)*
3) Մեջքին է ընկել թաց գետնի վրա. խեղճը կմրսի: *(ածական)*
4) Այդ ընդարձակ սենյակում խոնավության պատճառով ոչ մեկը չէր ապրում: *(դերանուն)*

27 **Ո՞ր տարբերակում ընդգծվածներից ոչ մեկը որոշիչ չէ:**

1) Ո՞վ է կանգնել **պաշտպան** երկրին մեր ավեր, Ո՞վ է թարգման մեր **դարավոր** տանջանքին:
2) Ու զանգերն այն լալագին **Մեռնող** իմ երկրում Չեն հուզելու քո հոգին **Տխրությամբ** անհուն:
3) Թշնամին եկավ մութի պես **կամաց**, Ամենքն **ահաբեկ** փախան դեպի սար:
4) Եվ հյուսիսային **հեռուներում** ու ցրտում Կարծես ցոլաց իմ նահիրյան արևն **ալ**:

28 **Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Այլայլված ու գրգռված տեղ հասավ Վահանը որ նկատելով եղբոր դիակը ուշակորույս ընկավ գետնին:
2) Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:
3) Որքան հեռանում էր այնքան ավելի էր զգում ինչ-որ մեկի անհանգստություն պատճառող ներկայությունը:
4) Բաթը զայրույթից կորցրել էր իրեն և նրա բիբերը թվում էր ուզում էին դուրս պոռթկալ ակնակապիճներից:

29 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Տուն գնալիս բրուտ Ավագը մի քանի քար է դարսում իրար վրա, վերևն էլ դնում ցաքի փուշ, որպեսզի, ինչպես ինքն է ասում, «քամին խաղա» և չորացնի ամանները:
2. Առաջին մասում դրված են «չարխը», ջրի կուժը և կավե ցեխը, երկրորդ մասում բերանի վրա շարված են դեռ չթրծած կժեր, կուլաներ, գավաթներ և դարակներ:
3. Բրուտի քարանձավը երկու մասից է. առաջինն ավելի ցածր է, երկրորդը՝ բեմի չափ բարձր:
4. Քարանձավը դուռ չունի, այդ պատճառով էլ բրուտները ուրիշ կերպ են մուտքը փակում:

1) 4, 3, 1, 2
2) 4, 1, 3, 2
3) 3, 2, 4, 1
4) 3, 4, 2, 1

30 **Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Առաջին անգամը չէ, որ ինձ վիճակվում է հայտնվել այն աննախանձելի ու անձեռնտու վիճակում, երբ ուրիշները գովաբանելով գովաբանում են մեր մշակույթի այս կամ այն երևույթը, իսկ ես հանձն եմ առնում առարկողի դերը: Ինչո՞ւ, եթե իրոք, դերն աննախանձելի է և, մանավանդ, անձեռնտու: Այն պատճառով, որ գովաբանությունը թվում է անհիմն, անճշմարիտ, իսկ ո՞ւմ հայտնի չէ հինավուրց ասացվածքը՝ «Ես Պլատոնին սիրում եմ, բայց ճշմարտությունն ավելի եմ սիրում»: Ավելի էական պատճառ էլ կա. այն, որ անճշմարիտ գովաբանությունը սխալ ճանապարհի է մղում արվեստը, և դրա հանդեպ չի կարելի անտարբեր լինել:

1) հրապարակախոսական
2) վարչական
3) գեղարվեստական
4) գիտական

31 **Ո՞ր միտքն է սխալ Ա. Իսահակյանի «Սաադիի վերջին գարունը» ստեղծագործության վերաբերյալ:**

1) Սաադին կյանքի վերջնագծին խորհում է աշխարհի ու կյանքի մասին:
2) Սաադին մտորում է, որ հարյուր տարվա կյանքն անցել է մի գիշերվա երազի պես:
3) Խոր ծերության հասած բանաստեղծը շարունակում է հիանալ աշխարհի գեղեցկությամբ:
4) Սաադին մահանում է՝ խորապես հիասթափված կանանցից:

32 **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից բերված հատված *չկա:***

- *«Այդ կինը երբեք բոբիկ ոտքերով չի քայլել, չի նստել մխացող աթարի առաջ»:*
- *«...Նայում էի գրատախտակի թվերին, աչքերիս առաջ բրդե շալով աղջկա գլուխը, ոտքերը ձյունի մեջ, ձյունի ճերմակության վրա օձի պես սև պարանը»:*
- *«Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը՝ մեր օրերում»:*

1) «Մթնաձոր»
2) «Ալպիական մանուշակ»
3) «Միրհավ»
4) «Խոնարհ աղջիկը»

33 **Ո՞ր հատվածը Հ. Թումանյանի որ ստեղծագործությունից է:**

1. «Անուշ»
2. «Թմկաբերդի առումը»
3. «Փարվանա»
4. «Հայոց լեռներում»

ա. Անց է կենում դարձյալ տարին:
Նայում է կույսն ամեն օր,
Ոչ մի սարից, ոչ մի ճամփին
Չի երևում ձիավոր:

բ. Տանում ենք հնուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է, ծնել մեր խորունկ հոգին:

գ. Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թռած իրար են գալիս,
Գալիս, կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռու՝ լազուր կամարում:

դ. Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վրա, Ջավախքի վրա,
Ավերակ բերդին սև ամպի նման
Ծուխն ու թշնամին չոքել են ահա:

1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

34 **Վ. Տերյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Եվ կարոտակեզ ահա կրկին
Վերադառնում եմ, որ առհավետ
Ունկնդիր լինեմ քո հին երգին
Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ...

1) «Որպես Լաերտի որդին»
2) «Մի՞թե վերջին պոետն եմ ես»
3) «Կարծես թե դարձել եմ ես տուն»
4) «Որպես լեռն է մեր պայծառ»

35 **«Սասնա ծռեր» էպոսի վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ կա:**

1) Խալիֆայի կողմից սպասվող վտանգից խուսափելու համար Սանասարն ու Բաղդասարը մոր խորհրդով հեռանում են Բաղդադից:
2) Մեծ Մհերը մենամարտում սպանում է Մըսրա Մելիքին և տիրում Բաղդադին:
3) Փոքր Մհերը լուծում է հոր վրեժը՝ սպանելով Չմշկիկ Սուլթանին և կոտորելով նրա զորքը:
4) Իմանալով Դավթի մահվան մասին՝ Խանդութը իրեն բերդի գլխից ցած է նետում և մահանում:

36 **Ի՞նչ է նշանակում *բանաստեղծական շարք*:**

1) լեզվական և բովանդակային ներքին ընդհանրություն ունեցող բանաստեղծությունների ամբողջություն
2) տարբեր թեմաներով գրված բանաստեղծությունների ժողովածու
3) տասը բանաստեղծությունից բաղկացած ժողովածու
4) մի քանի մասերից բաղկացած երկար բանաստեղծություն

37 **Ո՞րն է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի գլխավոր նպատակադրումը:**

1) ազգի մտավորականներին մուրացկանության համար մեղադրելը
2) ազգի մեծահարուստ մարդկանց բթամտությունը ցույց տալը
3) մտավորականների թշվառ վիճակի նկատմամբ ազգային մեծատունների անտարբերությունը ցույց տալը
4) գլխավոր հերոսի ամուսնության ճախողման վերաբերյալ զվարճալի պատմություն ստեղծելը

38 **Նշված պարբերականներից որի՞ն է աշխատակցել Մ. Նալբանդյանը:**

1) «Ազդարար»
2) «Մշակ»
3) «Խիկար»
4) «Հյուսիսափայլ»

39 **Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

որձկալ, բամբիշ, ժուժկալ, արհամարել, երկվություն, քողտիք, փռփռալ, դիցուկ, փասյան, շանբուտ, անստգյուտ, հյուլե:

40 **Տրված բառազույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից.**

ճաղկել-խարազանել, հեգնել-ծաղրել, շավիղ-կածան, կապուկ-տրցակ, անվեհեր-դժխեմ, տարտամ-անորոշ, հտպիտ-խեղկատակ, առաքուր-զինված:

41 **Տրված շարքում քանի՞ տեսակ դերանուն կա.**

իրեն, սա, ինչ-ինչ, որևէ, նույնքան, մյուս, այստեղ, ուրիշ, ոմն, իրար, ոչ մի, այլ:

42 **Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Թե ուր գնացին Հուդային սպանած երկուսը, չիմացվեց, բայց թողնելով ծանոթ ա-րահետը՝ նա խորացավ ձիթենիներով շրջապատված տարածքը՝ քսակի ոսկիները շպրտելով իր շուրջը հայտնվող մուրացիկներին՝ ձեռքի դողացող ափերը անցորդ-ներին ուղղած:

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ ստորակետ պիտի դրվի:**

- Մտնելով նրա առանձնասենյակը և հանդիպելով կատարյալ լռության անմիջա-պես գլխի ընկա այստեղ ինչ-որ բան այն չէ:
- Ադելինան հագել էր մետաքսյա զգեստ կիսակարճ թևքերով և մազերը հավաքել նուրբ ժապավենով:
- Նորից հին մտքերից խռովվեց հոգիս և որոշեցի գնալ Ասպրամի խուցը դուրս բե-րելու այդ թշվառ կնոջը աշտարակից և վերադարձնելու նրան իր տիկնությունը:
- Իրար հանդիպում էինք վերհիշելու քսանականների Երևանը և հաճախ էինք քննարկում ներկան ու ապագան:
- Ոչ ոքի համար գաղտնիք չէր որտեղ էր թաքնվել այդ մարդը կամ ինչ նպատակներ էր հետապնդում:
- Հակոբին ճանապարհ դնելիս հայրս այդ ահեղ մարդն անգամ չկարողացավ զսպել արցունքները:

44 **Հ. Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ պնդումներից քանիսո՞ւմ սխալ կա:**

- Աղունը, հակառակ Սիմոնի խեղճությանն ու անճարակությանը, կարողացել էր ընտանիքի համար բարեկեցիկ կյանք ստեղծել, քանի որ հարս էր եկել իր հոր տված հարուստ օժիտով:
- Աղունը հպարտությամբ է խոսում այն մասին, որ իր որդի Արմենակը գրելու ձիրքը ժառանգել է իրենից, և նրա լավագույն գրվածքները իր պատմածների հիման վրա են ստեղծվել:
- Աղունը Արմենակի՝ կյանքում ունեցած հաջողությունները և բարձր դիրքը կապում է այն բանի հետ, որ որդին բնավորությամբ իրեն է նման և չի ժառանգել իր հայր Սիմոնի հարմարվողականությունը:
- Աղունը անում է ամեն ինչ, որ իր կրտսեր որդի Սերոն նույնպես եղբոր նման քաղաքում ապրի:
- Աղունի մայրացուն դեմ էր, որ Աղունը ամուսնանա Սիմոնի հետ:
- Աղունը միշտ նշում է, որ թեև ինքը մայր չի ունեցել, բայց մայրացուն իրեն մեծացրել ու խնամել է հարազատի նման:

45 **Նշել այն բառերի (բառաձևերի) համարները, որոնց բոլոր վանկերը բաց են.**

1. հիրավի, 2. սիրելի, 3. հյուրասիրելու, 4. հնամենի, 5. ձեռնտու, 6. ձևափոխելու, 7. հայելի, 8. վերարկու, 9. մարտավկա:

46 **Նշել բարդ բառերի համարները.**

1. եռանկյուն, 2. արձակագիր, 3. ձեղնահարկ, 4. վերնատուն, 5. վատթարագույն, 6. ժպտադեմ, 7. գերաճ, 8. դասալիք, 9. մեծարգո:

47 **Տրվածներից որո՞նք են պարզ ժամանակաձևեր.**

1. չէր ապաքինվել, 2. պետք է մտածեիր, 3. եփեցինք-թափեցինք, 4. արժանանալու է, 5. կանգ էր առել, 6. դուրս եկավ, 7. չպիտի լսես, 8. թույլ մի՛ տուր, 9. սիրտ արեց:

48 **Նշել նախադասության այն անդամների համարները, որոնց շարահյուսական պաշտոնը ճիշտ է նշված:**

Ընդմիջումից հետո հանդեսի երկրորդ մասը պիտի սկսվեր մի բանաստեղծությամբ, որ արտասանելու էր Խոնարհի քույրը, և երբ վարագույրը բացվեց, փոքրիկ աղջիկը մանկան զիլ ձայնով սկսեց արտասանել:

1. **ընդմիջումից հետո**-ժամանակի պարագա
2. **երկրորդ**-որոշիչ
3. **պիտի սկսվեր**-բաղադրյալ ստորոգյալ
4. **որ**-ուղիղ խնդիր
5. **վարագույրը**-ուղիղ խնդիր
6. **երբ**-ժամանակի պարագա

49 **Նշել Ե. Չարենցի ստեղծագործությունների համարները.**

1. «Անվերնագիր» («Իմ մահվան օրը…»), 2. «Տաղ անձնական», 3. «Մեր պատմիչները և մեր գուսանները», 4. «Օտար, ամայի ճամփեքի վրա», 5. «Հեռացումի խոսքեր», 6. «Մահվան տեսիլ», 7. «Բիբլիական», 8. «Դանթեական առասպել», 9. «Հարդագողի ճամփորդները»:

50 **Ո՞ր հատվածներն են արևմտահայերենով:**

1. Իրիկվան մեջ, գյուղին քով,
   Կմրմնջե գուռն ուռիին տակ շքեղ:
   Ձայն կլեցնե աղբյուրն երգովը բյուրեղ,
   Աստղը՝ բյուրեղ արցունքով:
2. Ու գեթ ցոլք մը տայի ոսկի իմ հուրես
   Մութ հոգիի ճըրագներուն ցրտահար:
3. Երեսդ է լուսնի նըման բոլորեալ, տեսդ՝ արեգական.
   Ոնց որ դու ելնես քալես, արեգակերպ կու փայլես:
4. Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.
   Եվ համրագին գիրքը ձեռքես կ’իյնա վար:
5. Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
   Պար չես բռնում մանկական,
   Դու, դեռ ծովը չի հասած,
   Սգավոր ես ինձ նման:

Բ մակարդակ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են գրվում գծիկով:**

1) հուշարձան(կոթող), կաս(կարմիր), դույզն(ինչ)
2) հարավ(արևմուտք), Սևան(հէկ), մանր(մունր)
3) մեն(մենակ), փոխ(վարչապետ), թև(թիկունք)
4) անտես(անհայտ), գիշեր(ցերեկ), կողք(կողքի)

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատներն են միավանկ:**

1) խրձաձև, կարկտաբեր, սնապարծ
2) աղյուսապատ, պնդօղակ, թռչնորս
3) հանքափոր, անձկություն, մարդկային
4) ուսուցչուհի, առաջնակարգ, շրջանավարտ

53 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) **գզրոց** - սեղանի դարակ, **դարավանդ** - հնուց ավանդված
2) **լերկ -** բուսականությունից զուրկ, **գայթել -** ոտքը սահել
3) **գրաստ** - բեռնակիր կենդանի, **երախայրիք** - առաջին պտուղ
4) **սնգույր -** երեսը ներկելու քսուք, **մատռվակ -** գինի մատուցող

54 **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* արմատին (արմատներից մեկին) *չի* կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) ***-անի -*** տեսակավորել, սակավապետ, միգապատ
2) ***-ու -*** կատվաձագ, առապար, բարդի
3) ***-ի -*** այծենակաճ, տարբերակ, վայրենաբար
4) ***-որդ -*** միջնապատ, կարոտագին, բնութագիր

55 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Փերիները սարի գլխին Հավաքվեցին գիշերով:
2) Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան՝ Վիճակ հանելու աշխույժ երգերով:
3) Մեր առջև ձորն էր թշշում խավարչտին, Մեր դեմը՝ խաղում գիշերվա շունչը:
4) Ու ձորի գլխին մոլորված կանգնած՝ Նայում է ներքև՝ սիրտը սևակնած:

56 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա:***

1) Դեպի արևը դարեր ու դարեր թռի՛ր, սլացի՛ր, ազնի՛վ քարավան:
2) Բայց աչքերը մեր արևներ չտեսան, Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
3) Էլի գարուն կգա, կբացվի վարդը:
4) Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով:

57 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են համապատասխանում նշված տեսակին:**

1) հօգուտ, միահամուռ, զեկուցում - *նյութական*
2) սույն, դեպի, առթիվ - *քերականական*
3) անշուշտ, թերևս, իրավամբ - *վերաբերմունքային*
4) որպեսզի, այսինչ, առանց - *քերականական*

58 **Ո՞ր տարբերակում անենթակա նախադասություն կա:**

1) Կախարդվածի պես կանգնած՝ Տնե՞ր, տնե՞ր ավերակ…
2) Մթնշաղ է. անձրևում է միալար:
3) Պատիվդ պահող չկա, Մասրենի՛, բարի՛ մասրենի:
4) Քայլե՞լ ու քայլե՞լ, թափառե՞լ մենակ աշխարհի փոշոտ ճանապարհներին…

59 **Ո՞ր տարբերակում է տրված բարդ նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:**

1) *Թփերի խշշոցը լսեցին թե չէ, կաքավներն իսկույն մի քանի պտույտով իջան ա-րևախանձ արտերի վրա:*
   Թփերի խշշոցը լսելուն պես կաքավներն իսկույն մի քանի պտույտով իջան ա-րևախանձ արտերի վրա:
2) *Հայրենասեր մարդը, եթե անգամ կենսական պայմանները դժվարին են, չպետք է լքի հայրենի հողը:*
   Հայրենասեր մարդը չպետք է լքի հայրենի հողը անգամ կենսական պայմանները դժվարին լինելու դեպքում:
3) *Ես, որ աշակերտել եմ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին, հայ-րենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:*
   Ես՝ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտածս, հայրե-նիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
4) *Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր նա՝ այն մարդը, որ ճանապար-հին հանդիպել էր մեզ:*
   Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր ճանապարհին մեզ հանդիպած մարդը:

60 **Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասության բնույթը սխալ նշված:**

1) Սարյանը, թեև ծնվել է Ռուսաստանում, հայրենասիրական ոգով է դաստիարակվել: *(զիջման պարագա)*
2) Ինչ որ ապրել էր սիբիրյան հեռավոր աքսորավայրում, հիշում էր ամենայն մանրամասնությամբ: *(ենթակա)*
3) Մի՞թե քո սիրելի դայակը ծերացել է այնքան, որ այլևս ոչ մի բանի պիտանի չէ: *(չափի պարագա)*
4) Հայտնի՛ր ինձ՝ ինչն է խանգարում արքայորդու ամուսնությանը իշխան Սևադայի դստեր հետ: *(ուղիղ խնդիր)*

61 **Պնդումներից ո՞րն է սխալ:**

1) Պ. Դուրյանի «Իմ ցավը» բանաստեղծությունն ավարտվում է *«Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն...»* տողով:
2) Ռաֆֆին գրել է ոչ միայն արձակ ստեղծագործություններ, այլև բանաստեղծություններ:
3) Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի հերոս Լևոնը երազում էր մեկնել Իտալիա՝ Լուիզային մոտ լինելու համար:
4) *«Դանայան տակառ»* արտահայտությունը Գ. Զոհրապի «Ճիտին պարտքը» նովելում դարձել է տպավորիչ համեմատության եզր:

62 **Տրված հատվածը Հ. Սահյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սողոն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

1) «Քարափը»
2) «Մասրենի»
3) «Օրը մթնեց»
4) «Անտառում»

63 **Տրված բառերից քանի՞սն են բարդածանցավոր.**

վարքագիր, հրակայուն, գերբնական, անընդգրկելի, տարակարծիք, ակնածանք, կայանատեղ, բանտարկյալ, պատմավեպ:

64 **Տարբերակներից քանիսո՞ւմ նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ կա:**

Քնած թե արթուն՝ ծերունին լսում էր երգը հեռավոր օվկիանի, ու հոգին, աշխարհից անէացած, տանում էր նրան հեռու մի աշխարհ, ուր ոչ վիշտ կար, ոչ էլ տառապանք:

- **քնած**-հարակատար դերբայ, չեզոք սեռ, **թե**-ստորադասական շաղկապ
- **հեռու**-տեղի մակբայ, **մի**-անորոշ դերանուն
- **անէացած**-սոսկածանցավոր բայ, **նրան**-անձնական դերանուն
- **էլ**-ժամանակի մակբայ, **լսում էր**-անկատար անցյալ, ներգործական սեռ
- **ուր**-հարաբերական դերանուն, **կար**-պակասավոր բայ, ըղձական անցյալ

65 **Տրված հատվածում քանի՞ դերբայական դարձված կա:**

Այս միտքն այնքան հաճելի թվաց Արշակին, որ նա նստեց՝ մտածմունքներից ու երթևեկությունից հոգնած: Բայց նա շարունակում էր մտածել և կարծում էր, որ Գնելին բարեկամանալով՝ կարելի է թե՛ հանգիստ զբաղվել Ավանի շինությամբ և թե՛ պատժել անհնազանդ նախարարներին: «Ի՞նչ անել, որի՞ն նախապատվություն տալ»,- մտածում էր նա:

66 **Նշել այն բառերի համարները, որոնցում արմատի հնչյունափոխություն կա.**

1. երևութական, 2. սննդամթերք, 3. սառցաշերտ, 4. թախծախառն, 5. կարծրատիպ, 6. վարչական, 7. ահագնացայտ, 8. վերստին, 9. ուխտադրուժ:

67 **Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:**

1. Ահա և ինքը՝ Վիլյամ Սարոյանը՝ Ֆրեզնոյի հյուրանոցներից մեկի նախասրահում կանգնած:
2. Ես, կանգնած տաճարի կենտրոնում, նայում եմ վեր. հպարտ եմ, որ այնտեղ՝ ամենավերևում՝ երկնքին մոտիկ՝ այն հրաշք գմբեթն է, որ վերակառուցել է Տրդատ ճարտարապետը:
3. Հունական ափերի և Միջերկրականի կենտրոնում գտնվող կղզիների բնակիչները տեսնում էին՝ ինչպես են ծովի խորքից ավելի ու ավելի շատ առագաստներ գալիս իրենց կողմը:
4. Ուղեվարը մեզ պատմում է միջնադարյան գմբեթի կործանվելու և վերակառուցվելու մասին, բայց Տրդատ ճարտարապետի անունը հասկանալի է՝ չի տալիս:
5. Սուրբ Սոֆյայի տաճարը չորս կողմից շրջապատված է մինարեթներով. քրիստոնեական շքեղաշուք տաճարը հետագայում մզկիթի է վերածվել և կցվել են այդ չորս մինարեթները:

68 **Մտքերից որո՞նք են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը Ալեքսանդրիայի հիասքանչ փարոսն է: Այն կառուցվել է Պտղոմեոս թագավորի օրոք, որի անունն էլ պետք է գրվեր փարոսի վրա: Սակայն նախագծող և ճարտարապետ Սոստրատեսը այս անարդարությանը չի հաշտվում և դիմում է խորամանկության: Մարմարի վրա քանդակում է հետևյալը. «Կինգացի Սոստրատեսն այս նվիրում է փրկարար աստվածներին՝ ի սեր ծովագնացների»: Հետո այս գրվածքը ծեփում է բարակ շերտով, ապա վրայից գրում է արքայի անունը՝ համոզված լինելով, որ ամենակարող ժամանակը ծեփը կպոկի, և աշխարհին հայտնի կդառնա իսկական ստեղծողի անունը: Այդպես էլ լինում է. որոշ ժամանակ անց ծեփը պոկվում է, և երևան է գալիս Սոստրատեսի անունը:

Այս հրաշագեղ կոթողը կանգուն է մնացել շուրջ հազար տարի, մինչև մ.թ. 8-րդ դարում լրջորեն վնասվել է երկրաշարժից: Ապա սկսվել է հրաշագեղ կոթողի քայքայումը: Իսկ 14-րդ դարում փարոսն ամբողջովին կործանվել է հուժկու երկրաշարժից:

1. Սոստրատեսը Պտղոմեոսի պահանջով գրում է, որ փարոսը նվիրում է փրկարար աստվածներին՝ ի սեր ծովագնացների:
2. Սոստրատեսը թագավորի անունը գրում է մարմարի վրայի գրվածքը ծածկած նոր շերտի վրա:
3. Բնական տարերքների պատճառով մարդկությունը զրկվել է աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը համարվող փարոսից:
4. Փարոսի իրական ստեղծողի անունը հայտնի է դառնում 14-րդ դարի հուժկու երկրաշարժից անմիջապես հետո:
5. Սոստրատեսը հույս ուներ, որ ծեփը թափվելուց հետո գիտնականները կկարողանան վերծանել իր գաղտնագիրը:

69 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Որոշիչ ստորադաս նախադասությունը կարող է կապվել գերադասին ***որ, երբ, որտեղ*** հարաբերականներով:
2. Ենթակա ստորադաս նախադասությունը գերադասի հետ սովորաբար կապվում է ***որ, թեև, թե*** շաղկապներով:
3. Ներգործող անուղղակի խնդիր ստորադաս նախադասության գերադաս նախադասությունը միշտ կրավորական կառուցվածքի է:
4. Միևնույն բարդ նախադասության կազմում միաժամանակ չեն կարող լինել և՛ համադասությամբ, և՛ ստորադասությամբ կապվող բաղադրիչ նախադասություններ:
5. Գերադաս նախադասության պարզ ստորոգյալը կարող է արտահայտվել ստորադաս նախադասությամբ:
6. ***Այս, այդ, այն*** ցուցական դերանունները գերադաս նախադասության կազմում կարող են հանդես գալ որպես հարաբերյալ:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Անորոշ դերբայը ենթարկվում է *ու* հոլովման:
2. Հայերենի բոլոր բայերը ունեն դերբայական բոլոր ձևերը:
3. Ոչ բոլոր դեպքերում է բայական արմատով և *-ած*-ով կազմված բառը հարակատար դերբայ:
4. *Ե* խոնարհման բոլոր բայերի անորոշը և վաղակատարը ձևով նույնն են:
5. Անորոշ դերբայը եղանակային ձևերի կազմությանը չի մասնակցում:
6. Ենթակայական դերբայը կարող է ունենալ ուղիղ խնդիր լրացում: